ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Կարեն Բադիշյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վրաստանի Հանրապետություն, Թբիլիսի, հուլիսի 10-12-ը, 2024 թ.
4. **Հրավիրող կողմը.**
   Միգրացիայի միջազգային կազմակերպություն
5. **Գործուղման նպատակը**.
   «Միգրացիայի ներուժի խթանում սոցիալ-տնտեսական զարգացման համար Հայաստանում և Վրաստանում» ծրագրի շրջանակներում փորձի փոխանակման աշխատաժողովին մասնակցելու նպատակով:
6. **Քննարկված թեմաները.**
   - Քաղաքականության և կառավարման դերը արդյունավետ վերաինտեգրման գործում,
   - Վերաինտեգրման աջակցության ծրագրերը և դրանց ազդեցությունը,
   - Համայնքային մակարդակում կայուն վերաինտեգրման աջակցությունը:
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միգրացիայի երևույթը շարունակում է ազդել վերադարձի երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա՝ ներկայացնելով ինչպես հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ: Այս դինամիկայի կարևոր կողմը վերադարձած միգրանտների կայուն վերաինտեգրումն է իրենց հայրենի համայնքներում:

Վերադարձած միգրանտների վերաինտեգրումը բազմակողմանի խնդիր է, որը պահանջում է համապարփակ, ամբողջական և կարիքների վրա հիմնված մոտեցում, որը կարող է ազդել վերաինտեգրման վրա՝ ներառյալ տնտեսական, սոցիալական և հոգեսոցիալական հարթությունները տարածքային, համայնքային և անհատական մակարդակներում: Կայուն վերաինտեգրումը կարևոր է ոչ միայն վերադարձողների բարեկեցության, այլև այն համայնքների սոցիալ-տնտեսական կայունության և զարգացման համար, ուր նրանք վերադարձել են:

Այցի շրջանակներում, հուլիսի 11-ին Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) և Հայաստանի պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներին հյուրընկալեց Կախեթիի մարզպետի առաջին տեղակալ Պլատոն Կալմախելիձեն: Թելավիում կայացած հանդիպման ընթացքում քննարկվեցին վերադարձած միգրանտների վերաինտեգրման

ծրագրի շրջանակներում առկա խնդիրները և այդ ուղղությամբ Վրաստանում, և հատկապես Կախեթիի մարզում կատարված աշխատանքները: Նշվեց, որ միգրացիայի երևույթը շարունակում է ազդել վերադարձի երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա՝ ներկայացնելով ինչպես հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ: Այս դինամիկայի կարևոր կողմը վերադարձած միգրանտների կայուն վերաինտեգրումն է իրենց հայրենի համայնքներում:

Հուլիսի 12-ին Թբիլիսիում կայացավ Կայուն վերաինտեգրման տարածաշրջանային աշխատաժողովը. որը միավորել էր Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներին և նպատակն էր քննարկել առաջացող բոլոր տեսակի խնդիրները՝ հարթակ տրամադրելով շահագրգիռ կողմերին փորձի փոխանակման, լավագույն փորձը բացահայտելու և համագործակցությունը խթանելու, վերաինտեգրման ծրագրերում նորարարական մոտեցումները ներկայացնելու, վերաինտեգրման գործընթացներում ներգրավված շահագրգիռ կողմերի կարողությունները բարձրացնելու համար:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ժամանակ որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել, կարևորվել է փորձի փոխանակման նպատակով հետագա հանդիպումների ու քննարկումների կազմակերպումը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ՀՀ Շիրակի մարզում նախատեսվում է կազմակերպել քննարկումներ, որից հետո կնախագծվեն առաջիկա անելիքները.

- Կիսվել փորձով. հարթակ տրամադրել շահագրգիռ կողմերին՝ կիսվելու իրենց փորձով, մարտահրավերներով և վերաինտեգրման գործընթացներում ունեցած հաջողություններով:
- Բացահայտել և տարածել լավագույն փորձը և նորարարական մոտեցումները վերաինտեգրման ծրագրերում:
- Ստեղծել կարողություններ. բարձրացնել վերաինտեգրման գործընթացներում ներգրավված շահագրգիռ կողմերի կարողությունները:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**



16.07.2024թ.